

ԿՈԴ

050.0008 Ն. 25.01.22

25 հունվարի 2022 թվականի թիվ 8-Ն

**ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2021 թվականի չորրորդ եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**
2022 թ. հունվարի 27
ք. Երևան

Մարտին Գալստյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2021թ. չորրորդ եռամսյակ)

2022 թվականի հունվարի 25-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

Համաձայն [«Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման»](#) կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետև նաև՝ կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է [«Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը»](#) փաստաթղթի դրույթներով, համաձայն որի, ԿՀԲ չափը սահմանելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար հիմք են հանդիսանում Բազելյան մեթոդաբանությամբ գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշի ճեղքվածքը, համակարգային ռիսկի զարգացումները բնութագրող ֆինանսական ցիկլի ինդեքսը և վաղ ահազանգման այլ ցուցանիշներ:

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է հետևյալ փաստերի համապարփակ վերլուծությամբ.

1. 2021թ. չորրորդ եռամսյակի դրությամբ մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ ժամանակահատվածի համեմատ նվազել է և կազմել 68.96%¹: Այս ցուցանիշի համար հաշվարկված ճեղքվածքը (վարկեր/ՀՆԱ-ի տարբերությունը իր երկարաժամկետ տրենդից) շարունակել է նվազել՝ կազմելով -2.7 տ.կ., ինչը Բազելյան կոմիտեի կողմից առաջարկվող մեթոդաբանության համաձայն նախանշում է զրոյական ԿՀԲ դրույքաչափ:
2. Վարկավորման շուկայում 2021թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել են որոշակի բարելավման միտումներ: Մասնավորապես, նոր տրամադրվող սպառողական և բիզնես վարկերի մասով գրանցվել են դրական աճի տեմպեր: Հիպոտեկային վարկավորման մասով նախորդ եռամսյակների ընթացքում

¹ Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով):

արձանագրված բարձր աճի տեմպերը պահպանվել են², ինչը ուղեկցվել է նաև անշարժ գույքի շուկայում գների³ որոշակի աճով:

3. 2021թ. չորրորդ եռամսյակի համար հաշվարկված Ֆինանսական ցիկլի ինդեքսը, չնայած որոշակի աճին, շարունակում է գտնվել իր պատմական մեդիանից ցածր մակարդակում: Նախորդ եռամսյակի համեմատ Ֆինանսական ցիկլի ինդեքսը աճել է, ինչը հիմնականում պայմանավորված է հիպոտեկային վարկավորման և անշարժ գույքի գների ենթահինդեքսների աճով:
4. Չնայած Ֆինանսական ցիկլի զարգացումները վկայում են, որ ՀՀ տնտեսությունը գտնվում է վարկային ցիկլի վերականգման փուլում, սակայն վարկավորման առանձին ոլորտային միտումների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերականգնման վերոնշյալ միտումները լիարժեք չեն, և համաչափ կերպով չեն արտացոլվել վարկավորման որոշ ոլորտային ուղղություններում:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում **Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում ԿՀԲ սահմանաչափը թողնել անփոփոխ՝ 0% մակարդակում:**

² Ինչպես արդեն նշվել է ԿՀԲ նախորդ հիմնավորումներում, հիպոտեկային վարկավորման ոլորտում ռիսկային զարգացումների հետագա արդյունավետ հասցեագրման նպատակով ԿԲ-ը որոշում է կայացրել ներդնել պահանջ/գրավ հարաբերակցության առավելագույն մակարդակը սահմանող գործիքակազմ: Այս գործիքը պարտադիր կատարման ենթակա կլինի 2022թ. ապրիլից սկսած: ԿԲ խորհրդի համապատասխան որոշումը առկա է հետևյալ հասցեով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=156545>

³ Որպես ցուցանիշ՝ դիտարկվել է Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից հրապարակվող տվյալների հիման վրա հաշվարկված Երևանում բազմաբնակարան շենքերի մեկ քառակուսի մետրի միջինացված արժեքը: